

24/05/2005
համար 240 Ն

«ԳՐԱՍԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ--
ՆԵՐԻ ԼԻՑԵՆ-ՉԱ-ՎՈՐՈՒՄԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 16-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
20.12.05թ. թիվ 570Ն, 19.12.06թ. թիվ 721, 29.01.08թ. թիվ 22 Ն, 25.03.08թ. թիվ 78 Ն, 08.04.08թ. թիվ 106
Ն, 30.03.09թ. թիվ 69-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային
կազմակերպություն-նե-րի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 20-րդ, 21-
րդ, 22-րդ, 23-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդված «ե»
կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող
կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, գործունեության
կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը՝ համաձայն հավելված 1-ի
(կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

S. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240 Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 16

**ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՍԱՄՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ**

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկողության, լիցենզիայի գործողության կասեցման և դադարեցման, պարտավորությունների մարման, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, ծրագրային և անվտանգության պահանջները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող, և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, դրանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, դրանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, ինչպես նաև այն անձանց վրա, որոնք Հայաստանի Հանրապետության օրենքների և միջազգային պայմանագրերի հիման վրա իրավունք ունեն որպես ձեռնարկատիրական գործունեություն երրորդ անձանց համար իրականացնել վճարումների ընդունումը և կատարումը՝ առանց բանկային հաշիվների բացման:

Գլուխ 2. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը

4. Կազմակերպությունը դրամական (փողային) փոխանցումների լիցենզիա ստանալու համար պետք է բավարարի հետևյալ պահանջներին և պայմաններին՝

ա) կազմակերպությունը պետք է որպես իրավաբանական անձ գրանցված լինի ՀՀ պետական ռեգիստրում,

բ) կազմակերպությունը չի կարող իրականացնել առևտրային, արտադրական և այլ տիպի գործունեություն, բացառությամբ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիայի հիման վրա արտարժույթի դիլերային առուվաճառքից, արտարժույթի առուվաճառքից կամ փոստային ծառայությունների մատուցումից,

գ) կազմակերպության ղեկավարները կամ հավակնորդները պետք է համապատասխանեն սույն կանոնակարգի 85-րդ կետով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին,

դ) կազմակերպության գործունեության վայրը պետք է համապատասխանի սույն կանոնակարգի գլուխ 8-ով և գլուխ 9-ով սահմանված տեխնիկական հագեցվածության, ծրագրային, անվտանգության պահանջներին, և կազմակերպությունը պետք է կարողանա ապահովել իր կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների իրականացման համար սահմանված պայմանները, պահանջները, ժամկետները,

ե) պետք է ղեկոնցված լինեն սույն կանոնակարգի Գլուխ 3-ով սահմանված անհրաժեշտ դրամական միջոցներ կամ արժեթղթեր, կամ ներկայացվի անվերադարձելի բանկային երաշխիք:

5. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու համար կազմակերպության հիմնադիրները կամ նրանց կողմից լիազորված անձը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն հավելված 1-ի,

բ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կանոնադրության պատճենները՝ երեք օրինակից,

գ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության իրավասու մարմնի որոշումը՝ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից տրված՝ ղեկավարի (ղեկավարների) մասնագիտական որակավորման վկայականի(ների) պատճենը(ները)՝ համաձայն սույն կանոնակարգի 95-րդ կետով սահմանված պահանջների,

դ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության մասնակիցների և ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն հավելված 2-ի,

ե) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը,

զ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գործունեության կանոնակարգը, որը հաստատում է նրա կառավարման բարձրագույն մարմինը և ներառում է նրանց կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, դրանց իրականացման կարգն ու պայմանները,

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից մեկում սույն կանոնակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխներով սահմանված անհրաժեշտ դրամական միջոցների կամ արժեթղթերի դեպոզիտային մասին պայմանագրի պատճենը կամ անվերադարձելի բանկային երաշխիքը, ինչպես նաև տեղեկանք՝ փաստացի դեպոզիտային միջոցների վերաբերյալ:

6. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալուց հետո քննում է դրանք և օրենքով սահմանված երկամսյա ժամկետում որոշում է կայացնում կազմակերպությանը (հայտատուին) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու հայտի մերժման վերաբերյալ:

7. Եթե լիցենզավորվող վճարահաշվարկային կազմակերպության (այսուհետ՝ լիցենզավորվող կազմակերպություն) կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են (ամբողջական չեն), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է լիցենզավորվող կազմակերպությանը, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Վերոնշյալ ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի, նյութերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում լիցենզիա ստանալու հայտը մերժվում է՝ փաստաթղթերը թերի լինելու հիմքով:

8. Կազմակերպությունը լիցենզավորվում է, եթե բավարարվել են հետևյալ պայմանները և ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը.

ա) դեպոզիտային են սույն կանոնակարգի Գլուխ 3-ով սահմանված անհրաժեշտ դրամական միջոցներ կամ արժեթղթեր, կամ ներկայացված է անվերադարձելի բանկային երաշխիք,

բ) Կենտրոնական բանկի կողմից տեղում ստուգման արդյունքում հաստատվել է, որ դրամական (փողային) փոխանցումների գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը, տեխնիկական հագեցվածությունը, անվտանգությունը, ծրագրային միջոցների կիրառման պայմանները համապատասխանում են սույն կանոնակարգի 8-րդ և 9-րդ գլուխներով սահմանված պահանջներին,

գ) լիցենզավորվող կազմակերպության ղեկավարները բավարարում են սույն կանոնակարգի 17-րդ գլխով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջներին,

դ) բացակայում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ի 5-րդ մասով սահմանված հիմքերը:

9. Լիցենզավորվող կազմակերպությանը լիցենզիա տրամադրելու մասին որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում Կենտրոնական բանկը տվյալ կազմակերպությանը տալիս է դրամական

(փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա՝ համաձայն հավելված 3.1-ի, ինչպես նաև լիցենզիայով նախատեսված ղեկավարների լիցենզիայի ներդիր(ներ)ը՝ համաձայն հավելված 3.2-ի:

10. Կենտրոնական բանկը մերժում է լիցենզիա ստանալու հայտը, եթե՝

ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,

բ) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին,

գ) չեն պահպանվել «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ի 2-րդ մասով սահմանված պահանջներն ու պայմանները,

դ) Կենտրոնական բանկի սահմանված հետևյալ չափանիշների համաձայն կազմակերպության լիցենզավորումը կարող է առաջացնել ռիսկեր՝ կապված այն երկրներ ուղղված դրամական (փողային) փոխանցումների իրականացման հետ, որոնք ներառված են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրության բացակայությամբ պետությունների և տարածքների ցանկ»-ում:

11. Լիցենզավորման հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը:

Լիցենզիայի հայտը մերժելու դեպքում հայտատուն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով:

Գլուխ 3. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից դեպոնացված դրամական միջոցների, արժեթղթերի, բանկային երաշխիքի կիրառման ընդհանուր պայմանները և դրանց նվազագույն չափը

12. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից որպես դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարումն երաշխավորող միջոց (այսուհետ՝ երաշխավորող միջոց) կարող են հանդիսանալ՝

ա) դեպոնացված դրամական միջոցները (փող),

բ) դեպոնացված արժեթղթերը,

գ) անվերադարձելի բանկային երաշխիքը:

13. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է օգտագործել վերը նշված երաշխավորող միջոցներից ցանկացածը, ինչպես նաև կիրառել մի քանի միջոց միաժամանակ՝ պայմանով, որ վերջիններիս ծավալային մեծությունների հանրագումարը չպետք է փոքր լինի, քան սույն կանակարգի 15-րդ կետով սահմանված գումարը:

14. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է փոխարինել իր կողմից կիրառված երաշխավորող միջոցը՝ սույն կանոնակարգով սահմանված կանոնների համաձայն նախօրոք ներկայացնելով այլ երաշխավորող միջոց՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկին:

15. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից կիրառվող երաշխավորող միջոցների նվազագույն չափը կազմում է 500 000 ՀՀ դրամ:

Գլուխ 4. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից դեպոնացվող դրամական միջոցների դեպոնացման կարգը, պայմանները, ժամկետները

16. Դրամական միջոցների դեպոնացումն իրականացվում է միայն ՀՀ դրամով:

17. Դրամական միջոցների դեպոնացումն իրականացվում է ՀՀ տարածքում գործող բանկերից մեկում բացված հատուկ բանկային հաշվի միջոցով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և տվյալ բանկի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագրի հիման վրա:

18. Բանկային հաշվի սպասարկման պայմանագրում պետք է հստակ սահմանված լինեն սպասարկման հետևյալ պայմանները՝

ա) հաշվում առկա դրամական միջոցները հանդիսանում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման միջոց, որը չի կարող գրավադրվել կամ օգտագործվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ընթացիկ տնտեսական գործունեության ժամանակ,

բ) հաշիվը վարվում է ՀՀ դրամով,

գ) հաշվի վրա միջոցների մուտքագրման սահմանափակումներ չկան,

դ) հաշվից ելքերը կարող են կատարվել հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գրավոր կարգադրությամբ՝ միայն Կենտրոնական բանկի թույլտվության առկայության դեպքում, որը կարող է դրվել կարգադրության վրա կամ ներկայացվել Կենտրոնական բանկի կողմից վավերացված առանձին նամակով,

ե) հաշիվը չի կարող փակվել առանց Կենտրոնական բանկի թույլտվության,

զ) դեպոնացված միջոցների բանկային հաշիվը վարող բանկը չի կարող տվյալ հաշվից մարել կազմակերպության՝ իր կամ այլ անձանց նկատմամբ եղած պարտավորությունները,

է) դեպոնացված միջոցները կարող են օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված կարգով:

19. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դեպոնացման համար բացված բանկային հաշվի պայմանագրի պատճենը և փաստացի դեպոնացումը վկայող տեղեկանք՝ համաձայն հավելված 4-ի:

20. Դեպոնացման ենթակա գումարի մեծության փոփոխման վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ Կենտրոնական բանկը տեղեկացնում է այդ մասին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

Գլուխ 5. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից դեպոնացվող արժեթղթերի տեսակները, դեպոնացման կարգը, պայմանները, ժամկետները

21. Դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման համար դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է դեպոնացնել միայն Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր:

22. Դեպոնացվող արժեթղթերի մեծությունը հաշվարկվում է արժեթղթերի անվանական արժեքով:

23. Սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված արժեթղթերի դեպոնացումն իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիլեր հանդիսացող բանկի մոտ բացված հատուկ դեպո հաշվի միջոցով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և տվյալ բանկի միջև կնքված դեպո հաշվի պայմանագրի հիման վրա:

24. Դեպո հաշվի պայմանագրում պետք է հստակ սահմանված լինեն հետևյալ պայմանները՝

ա) դեպո հաշվում առկա արժեթղթերը հանդիսանում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման միջոց և չեն կարող օտարվել, գրավադրվել կամ այլ կերպ օգտագործվել կազմակերպության ընթացիկ գործունեության ժամանակ,

բ) դեպո հաշվի վրա արժեթղթերի մուտքագրման սահմանափակումներ չկան,

գ) դեպո հաշվից արժեթղթերի ելքագրում (բացառությամբ արժեթղթերի մարման) կարող է իրականացվել հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գրավոր կարգադրությամբ՝ միայն Կենտրոնական բանկի թույլտվության առկայության դեպքում, որը կարող է դրվել կարգադրության վրա կամ ներկայացվել Կենտրոնական բանկի կողմից վավերացված առանձին նամակով,

դ) դեպո հաշվում առկա արժեթղթերը կարող են փոխարինվել նույն անվանական արժեքի սույն կանոնակարգով սահմանված այլ արժեթղթերով՝ հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից նախօրոք մուտքագրելով փոխարինող արժեթղթերը դեպո հաշվի վրա, այնուհետև ներկայացնելով փոխարինվող արժեթղթերի ելքագրման կարգադրություն (արժեթղթերի փոխարինման դեպքում Կենտրոնական բանկի թույլտվությունը չի պահանջվում),

ե) դեպո հաշիվը չի կարող փակվել առանց Կենտրոնական բանկի թույլտվության,

զ) դեպոնացված արժեթղթերի դեպո հաշիվը վարող բանկը չի կարող տվյալ հաշվից մարել կազմակերպության՝ իր կամ այլ անձանց նկատմամբ եղած պարտավորությունները,

ե) դեպոնացված արժեթղթերը կարող են օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված կարգով,

ը) դեպոնացված արժեթղթերի արժեկտրոնային եկամուտները կարող են ազատ տնօրինվել հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից,

թ) դեպոնացված արժեթղթերի մարման դեպքում մարման արդյունքում ստացված դրամական միջոցները դեպոնացնող բանկի կողմից մուտքագրվում են հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության անունով բացված հատուկ դրամային հաշվի վրա՝ տեղեկացնելով այդ մասին հաշվետեր կազմակերպությանը, որը պարտավոր է 5 բանկային օրվա ընթացքում տալ կարգադրություն դեպոնացնող բանկին՝ մարված արժեթղթերի անվանական արժեքին հավասար անվանական արժեքով այլ արժեթղթեր ձեռք բերել՝ հատուկ դրամային հաշվում առկա միջոցների հաշվին: Ձեռք բերված արժեթղթերը մուտքագրվում են դեպոնացված արժեթղթերի դեպո հաշվի վրա, որից հետո հատուկ դրամային հաշվում առկա մնացորդային գումարը կարող է ազատ տնօրինվել հաշվետեր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից: 5 բանկային օրվա ընթացքում դեպոնացնող բանկին կարգադրություն չներկայացնելը համարվում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության համաձայնությունը հատուկ դրամային հաշվում առկա գումարը սույն կանոնակարգի 4-րդ գլխի համաձայն դեպոնացնելու և համապատասխան բանկային հաշվի պայմանագրի բացակայության պարագայում՝ այդ պայմանագիրը կնքելու և դեպոնացվող դրամական միջոցների բանկային հաշիվ բացելու համար:

25. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում արժեթղթերի դեպոնացման համար բացված դեպո հաշվի պայմանագրի պատճենը և արժեթղթերի փաստացի դեպոնացումը վկայող տեղեկանք՝ համաձայն հավելված 5-ի:

Գլուխ 6. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված անվերադարձելի բանկային երաշխիքի պայմանները

26. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը որպես դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորող միջոց կարող է ներկայացնել սույն գլխով սահմանված պահանջներին բավարարող անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիք:

27. Երաշխիքը կարող է տրամադրվել միայն ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից:

28. Տրամադրվող անվերադարձելի բանկային երաշխիքը պետք է պարունակի հետևյալ դրույթները՝

ա) երաշխիքը հանդիսանում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով չմարված պարտավորությունների երաշխավորող միջոց,

բ) երաշխիքի բենեֆիցիար հանդիսանում է Կենտրոնական բանկը,

գ) երաշխիքը պետք է տրամադրված լինի առնվազն մեկ տարի ժամկետով,

դ) երաշխիքը կարող է օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված կարգով:

29. Դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների երաշխավորման գործընթացի անընդհատելիության ապահովման համար երաշխիքի ժամկետը լրանալուց առնվազն 2 աշխատանքային օր առաջ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում նույն գումարի և նույն պայմաններին բավարարող նոր անվերադարձելի բանկային երաշխիք կամ դրամական (փողային) միջոցների կամ արժեթղթերի դեպոնացումը հավաստող տեղեկանք՝ սույն կանոնակարգի գլուխ 4-ի և գլուխ 5-ի համաձայն:

Գլուխ 7. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից պարտավորությունների չկատարման պարագայում Կենտրոնական բանկի կողմից երաշխավորող միջոցների օգտագործման կարգը, պայմանները, ժամկետները

30. Եթե դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունն ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի պահանջները, ապա նա պարտավոր է այդ մասին դիմում ներկայացնել Կենտրոնական բանկ՝ դիմումին կցելով պարտատերերի ցուցակը, որում պետք է նշված լինեն նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը, պարտավորությունների չափը: Այդ ցուցակում պետք է ներառել նաև այն պարտատերերի վերաբերյալ տեղեկություններ, որոնց նկատմամբ պարտավորությունների կատարման ժամկետը չի լրացել:

31. Կենտրոնական բանկը, ստանալով դիմումը և կից փաստաթղթերը, ուսումնասիրում է դրանք, օրենքով սահմանված կարգով կատարում ստուգումներ:

32. Կենտրոնական բանկը, դիմումը և կից փաստաթղթերը ստանալուց հետո եռամսյա ժամկետում որոշում է ընդունում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված դիմումը մերժելու կամ դիմումը բավարարելու մասին:

Կենտրոնական բանկը մերժում է դիմումը, եթե ստուգման արդյունքում չեն հայտնաբերվում դրամական (փողային) փոխանցումների գծով չմարված պարտավորություններ:

33. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված դիմումը Կենտրոնական բանկի կողմից բավարարվելու դեպքում Կենտրոնական բանկը որոշում է ընդունում տվյալ կազմակերպության կողմից պարտատերերի պահանջները բավարարելու ի վիճակի չլինելու մասին: Որոշման մեջ նշվում են պարտատերերի պահանջների բավարարման չափը՝ ըստ արժույթների, պարտատերերի անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը: Որոշումը կազմվում է երկու օրինակից: Որոշման մեկ օրինակը ընդունման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է տվյալ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

Կենտրոնական բանկը որոշման ընդունման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակը ուղարկվում է մաս այն բանկին, որտեղ գտնվում են դեպոնացված դրամական միջոցները, արժեթղթերը կամ որը տրամադրել է երաշխիքը:

34. Գրամական միջոցների դեպքում բանկը Կենտրոնական բանկի որոշումը ստանալու պահից 3 բանկային օրվա ընթացքում կատարում է պարտատերերին վճարում՝ սույն կանոնակարգի 33-րդ կետով սահմանված Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

Բանկային երաշխիքի դեպքում Կենտրոնական բանկը կարգադրություն է ներկայացնում երաշխիք տված բանկին՝ հանձնարարելով եռօրյա ժամկետում վճարել երաշխիքով սահմանված գումարը սույն կանոնակարգի 33-րդ կետով սահմանված Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

Արժեթղթերի դեպքում Կենտրոնական բանկը նախաձեռնում է դեպոնացված արժեթղթերի հետ գնում և դրանից ստացված միջոցները փոխանցում է դեպոնացնող բանկի հաշվի վրա՝ կարգադրելով վճարել պարտատերերին՝ սույն կանոնակարգի 33-րդ կետով սահմանված Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

35. Կենտրոնական բանկի որոշմամբ հաստատված պարտատերերի ցուցակներում ընդգրկված պարտատերերը երաշխավորող միջոցների հաշվին փոխհատուցման պահանջներ կարող են ներկայացնել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից 6 ամսվա ընթացքում:

36. Սույն գլխով սահմանված կարգով պարտատերերի ցուցակում չընդգրկված, ինչպես մաս սույն գլխի 35-րդ կետով սահմանված ժամկետից ուշ պահանջներ ներկայացնող պարտատերերի պահանջները չեն բավարարվում:

37. Դեպոնացված միջոցներն անբավարար լինելու դեպքում սույն գլխում նշված պարտատերերի միջև դրանք բաշխվում են պահանջների գումարներին համամասնորեն:

38. Այն դեպքում, երբ պարտատերերի պահանջները դեպոնացված միջոցների հաշվին ամբողջությամբ չեն բավարարվում, ապա դրանք կարող են բավարարվել «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

39. Պարտատերերի պահանջների բավարարման արդյունքում մնացած դրամական միջոցները կամ պարտատերերի չհայտնաբերման դեպքում երաշխավորող միջոցները կարող են տնօրինվել կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահից 6 ամիս հետո:

Գլուխ 8. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության և անվտանգության պահանջները

40. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքով վերցված տարածք: Տարածքի վարձակալության (ենթավարձա-

կալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրից բխող իրավունքները պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, և պայմանագիրը պետք է կնքված լինի Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն մեկ տարի ժամկետով:

41. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի գործունեության վայրը պետք է բավարարի հետևյալ պահանջներին, եթե դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը գործառնություններն իրականացնում են կանխիկ`

ա) առանձնացված լինի հարակից տարածքներից,

բ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների տարածքը պետք է ունենա`

գործառնական դրամարկղ (այսուհետ` դրամարկղ),

դրամապահոց (իր նախադրամապահոցով) կամ չիրկիզվող պահարանների սենյակ (որը պետք է առանձնացված լինի հարակից տարածքներից, և որի արտաքին պատի պատուհանները (առկայության դեպքում) պետք է լինեն ճաղապատված, հաճախորդի սպասարկման սրահ:

գ) անվտանգության ազդարարման գործող համակարգ:

42. Գրամարկղը հարակից տարածքներից պետք է առանձնացված լինի շինանյութից ու ապակուց կառուցված պատերով: Այն պետք է ունենա առանձին մուտք` կողպվող դռնով, պայմանով, որ տվյալ տարածքը դրսից հնարավոր է մուտք գործել միայն հիշյալ դռնով: Գրամարկղի դիմային մասի պատը պետք է ունենա 1-1.2 մ բարձրություն, որից հետո սկսվում է ապակե մասը: Գրամարկղի դիմային ապակին պետք է տեղակայված լինի այնպես, որ բացառի հաճախորդի և գանձապահի անմիջական շփումը, ինչպես նաև ապահովի կանխիկ դրամը հաշվելու դիտողական հսկողությունը` թե մեկ, թե մյուս կողմից (հաճախորդի հսկողությունը գանձապահի նկատմամբ և գանձապահի հսկողությունը հաճախորդի նկատմամբ):

43. Գրամապահոցի կամ չիրկիզվող պահարանների սենյակի առկայությունը պարտադիր չէ, եթե կանխիկ դրամի ամենօրյա տեղափոխման, հանձնման ու պահպանման վերաբերյալ ինկասսացիոն ծառայության կամ դրամապահոց ունեցող Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկի (բանկի մասնաճյուղի) հետ կնքված են համապատասխան պայմանագրեր: Սույն կետում նշված պայմանագրերի առկայությունը պարտադիր չէ, եթե դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության օրենքներով վերապահված է ծառայողական զենք ունենալու իրավունք: Նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո անմիջապես կնքվում են նոր պայմանագրեր, և 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացվում դրանք կամ նախկին պայմանագրերի ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթեր:

Չիրկիզվող պահարանների սենյակը պետք է ունենա մեկ կողպվող դուռ, իսկ մուտքը լինի միայն դրամարկղից:

Դրամապահոցը կառուցվում է առանց պատուհանների և պետք է ունենա մեկ զրահապատ չիրկիզվող դուռ: Դրամապահոցի մուտքը պետք է լինի միայն դրամարկղից:

Դրամապահոցը չպետք է ունենա ընդհանուր պատ շենքի արտաքին և նույն շենքում տեղակայված այլ հաստատությունների պատերի հետ: Դրամապահոցը շենքի արտաքին կամ այլ հաստատությունների պատերին կից կառուցելու դեպքում դրանց միջև պետք է լինի դիտողական միջանցք, որը հնարավորություն կտա դիտել և հսկել դրամապահոցի պատերի ամբողջականությունը (հսկելու անվտանգությունը):

Շենքի առաջին հարկում դրամապահոցի տակ նկուղային հարկի առկայությունն անթույլատրելի է: Եթե դրամապահոցի վերևում տեղակայված է այլ կազմակերպություն (կամ այն գտնվում է շենքի վերջին հարկում), ապա դրամապահոցը առաստաղից պետք է բաժանված լինի դիտողական միջանցքով, որը հնարավորություն կտա դիտել և հսկել առաստաղի ամբողջականությունը:

44. Հաճախորդի սպասարկման սրահը պետք է առանձնացված լինի արտաքին միջավայրից և ապահովի հաճախորդի անվտանգությունը գործարքի ժամանակ: Սույն ենթատարածքի առկայությունը պարտադիր չէ, եթե լիցենզավորված անձի տարածքը գտնվելու է բնակչության սպասարկումն իրականացնող որևէ օբյեկտում՝ ոչ բացօթյա տարածքում:

45. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և անվտանգության ահազանգման համակարգ: Անվտանգության ազդարարման գործող համակարգի էլեկտրասնուցումը դադարելու դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է դադարեցնել գործունեությունը՝ մինչև էլեկտրասնուցման վերականգնումը:

46. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկական հագեցվածությունը՝

ա) չիրկիզվող պահարան (եթե գործառնություններն իրականացնում են կանխիկ),

բ) դրամանիշի իսկությունը ստուգող սարք (եթե գործառնություններն իրականացնում են կանխիկ),

գ) ցուցանակ, որտեղ նշվում են լիցենզավորված անձի անվանումը, աշխատանքային օրերը և ժամերը,

46¹. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության հաճախորդների սպասարկման սրահում, իսկ կանխիկով գործառնությունների կատարման դեպքում՝ դրամարկղի դիմային մասում, հաճախորդների համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիայի պատճենը, մատուցվող ծառայությունների տեսակները և սակագները, ինչպես նաև սույն կանոնակարգի 104¹ կետի «ա» կամ «բ» ենթակետերում սահմանված փոխարկման գործառնությունների իրականացման դեպքում՝ արտարժույթի փոխարկման փոխարժեքները:

46.2 Գրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունը, դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքները արտացոլող վահանակը տեղադրում է միայն իր դրամարկղում: Գրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունը, դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության մասնաճյուղը դրամարկղի ներսում փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Գրամարկղից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:

Գլուխ 9. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող ծրագրային պահանջները

47. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ապահովեն իրենց գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկա-ծրագրային ապահովման և անվտանգության հետ կապված կանոնակարգիչ փաստաթղթերի առկայությունը և դրանցով սահմանված պահանջների կատարումը:

48. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները իրենց տեխնիկա-ծրագրային ապահովման և անվտանգության վերաբերյալ փաստաթղթերով պետք է՝

ա) սահմանեն արտաքին կրիչների հետ (մագնիսային, լազերային և այլ տիպի) աշխատանքի կանոնները՝ դրանց պահպանումը, այդ կրիչների տեղափոխման և կազմակերպության տարածքից դուրսբերման սահմանափակումը, ինչպես նաև դրանց միջոցով գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության արխիվացման գործընթացը յուրաքանչյուր օրվա կտրվածքով,

բ) մշակեն և խիստ պահպանեն արխիվային կրիչների, սերվերների (շահագործման դեպքում) տեղակայման սենյակներ մուտք գործելու իրավունք ունեցող անձանց ցուցակը և մուտք գործելու կանոնները,

գ) ծրագրի շահագործման դեպքում սահմանեն այդ ծրագրային ապահովման վերաբերյալ բոլոր ուղեկցող փաստաթղթերը, որոնք պետք է ընդգրկեն՝ ծրագրի նկարագրությունը, օգտագործողի, ադմինիստրատորի և անվտանգության ադմինիստրատորի ձեռնարկները, և այլ փոստաթղթեր, որոնց առկայության անհրաժեշտությունը կազմակերպության հայեցողությամբ կարող է առաջանալ շահագործման ընթացքում,

դ) հստակ սահմանեն արտակարգ իրավիճակներում անձնակազմի գործողությունների և յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունների շրջանակները:

49. Բոլոր սերվերները, ցանցային սարքավորումները և աշխատակայանները, եթե առկա են, պետք է ապահովված լինեն անխափան էներգասնուցման սարքերով, որոնց ինքնուրույն աշխատանքի

ժամանակը պետք է թույլատրի իրականացնելու անցումը հիմնականից պահուստային տարբերակի վրա, կամ ժամանակավոր դադարեցնել աշխատանքը առանց տեղեկատվության կորուստի:

50. Համակարգերի շահագործման դեպքում այն պետք է պահանջի օգտագործողներից նույնականացնել իրենց մինչև համակարգով որևէ գործողության իրականացումը: Համակարգը պետք է օգտագործի պաշտպանական մեխանիզմ (գաղտնաբառ կամ այլ նույնականացման միջոց)՝ օգտագործողի ինքնությունը հաստատելու համար:

50.1. Այն դեպքում, երբ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունն ինքնուրույն է մշակել ծրագրային համակարգը, պետք է առկա լինեն՝

- ա) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,
- բ) ծրագրային համակարգի մշակման մասնակիցների ցուցակը, մասնակիցների զբաղեցրած պաշտոնները և մասնագիտական կրթությունը,
- գ) ծրագրի մշակման լեզուն, ինտերֆեյսը,
- դ) ծրագրային կոդի գտնվելու վայրը,
- ե) ծրագրային կոդի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,
- զ) տեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, տեստավորման արձանագրությունը, տեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,
- է) այդ ծրագիրը օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների՝ տեստավորմանը մասնակցությունը փաստող փաստաթղթերը,
- ը) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր:

50.2. Այն դեպքում, երբ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ծրագրային համակարգը մշակվել է այլ կազմակերպության կողմից, պետք է առկա լինեն՝

- ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից կիրառվող ծրագրային ապահովման վերաբերյալ տվյալ կազմակերպության և մշակող կազմակերպության միջև կնքված պայմանագիրը,
- բ) ծրագրային համակարգը մշակող կազմակերպությանը ներկայացված հստակ տեխնիկական առաջադրանքը և պահանջները,
- գ) նոր մշակված ծրագրային ապահովման տեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են տեստավորման արդյունքները, տեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,
- դ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և ծրագրային ապահովումը մշակող կազմակերպության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,
- ե) մշակող կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,
- զ) մշակող կազմակերպության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից մշակող կազմակերպությանը տրված վկայագիր կամ գրանցված որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրվածությունը փաստող փաստաթուղթ:

50.3. Մույն կանոնակարգի 50.2 կետում նշված դեպքում պետք է ապահովվեն ծրագրային ապահովման համար անհրաժեշտ հետևյալ կանոնները՝

- ա) մշակող կազմակերպության կողմից ծրագրային ապահովման սպասարկման պայմանագրից հրաժարվելու դեպքում տվյալ կազմակերպությունը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը տեղեկացնում է առնվազն 3 ամիս առաջ,
- բ) համակարգի սպասարկման աշխատանքների հետ կապված հարցումների կատարման նվազագույն ժամանակահատվածի առկայություն.
- գ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը մշակող կազմակերպությունը տրամադրում է ծրագրային տեքստերը.
- դ) մշակող կազմակերպությունը չի կարող որևէ անձնական օգտագործման «բեքդոր», ալսիքսն՝ հեռահար աշխատատեղից կամայական նպատակով ծրագրային համակարգ մուտքի հնարավորություն ունենալ,
- ե) համակարգը մշակող կազմակերպության ստեղծած՝ գլխավոր աղմինիստրատորի գաղտնաբառը վերջնական գործարկումից և ծրագրի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց անմիջապես հետո փոխվում է և փակ ծրարի միջոցով փոխված գաղտնաբառը հանձնվում է կազմակերպության գլխավոր տնօրենին,
- զ) համակարգը մշակող կազմակերպությունը կազմակերպում է ուսուցում և (կամ) տրամադրում է համակարգի օգտագործման ձեռնարկներ,
- է) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը (կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիազորած անձը) պետք է ունենա մոնիտորինգի իրականացման հնարավորություն մշակող կազմակերպությունում՝ պայմանագրի դրույթների ապահովման շրջանակներում (տեխնիկական անվտանգություն, ծրագրերի մշակման և տեստավորման գործընթաց և այլն),
- ը) Կենտրոնական բանկին (պահանջի առկայության դեպքում) ծրագրային ապահովման տրամադրման հնարավորության վերապահում՝ անհրաժեշտ անվտանգության տեստավորումների իրականացման նպատակով:

50.4. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների տեղեկատվական համակարգերը պետք է համապատասխանեն նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 18-ի թիվ 71Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» գլուխ VII-ով բանկերի համար սահմանված տեղեկատվական համակարգերի պահանջներին:

Գլուխ 10. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, ներառվող տեղեկությունները

51. Կենտրոնական բանկը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը, որը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

52. Լիցենզիաների ձևաթղթերը խիստ հաշվառման փաստաթղթեր են, ունեն հաշվառման համար, սերիա և հաշվառվում ու պահպանվում են Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման կողմից:

Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման կողմից վարվում են դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիաների գրանցամատյան, որում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

ա) լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը,

բ) լիցենզիայի համարը,

գ) լիցենզիա տալու ամսաթիվը և գրանցման համարը,

դ) գործունեության այն տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիան,

ե) գործունեության իրականացման վայրը,

զ) տեղեկություններ՝ գրանցամատյանում լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի գործողության կասեցման և գործողության դադարեցման մասին

Գրանցամատյանի ձևը սահմանվում է՝ համաձայն հավելված 11-ի:

53. Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության համար կազմում է անհատական գործ, որին կարվում է նաև լիցենզիայի գործողության դադարեցման հետևանքով վերադարձված լիցենզիան:

54. Լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց վերաբերյալ տեղեկությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվում են պետական տուրքի վճարման դեպքում՝ 3 օրվա ընթացքում:

55. Լիցենզիաների գրանցամատյանից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություններին տրամադրվում է անվճար՝ 3 օրվա ընթացքում:

Գլուխ 11. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի տրամադրումը

56. Լիցենզիայի կամ ներդիրի կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) դեպքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը դրա մասին հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ կրկնօրինակը ստանալու համար և հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության որևէ միջոցով:

Կենտրոնական բանկը կորած լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը տալիս է զանգվածային լրատվության որևէ միջոցով հայտարարության հրապարակման օրվանից 15 օր հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

57. Լիցենզիան կամ ներդիրը օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը դրա մասին հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ կրկնօրինակը ստանալու համար: Կրկնօրինակը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը տրվում է նրա կողմից դիմումը տալու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, միաժամանակ՝ նրանից վերցվում է ոչ պիտանի դարձած լիցենզիան:

58. Լիցենզիաների կամ ներդիրների կրկնօրինակների վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրում:

Գլուխ 12. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիայի վերաձևակերպումը

59. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության վերակազմակերպման, գտնվելու վայրի կամ անվանման փոփոխման դեպքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

60. Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության համապատասխան հայտը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

61. Լիցենզիայի վերաձևակերպման ժամանակ Կենտրոնական բանկը լիցենզիաների գրանցամատյանում կատարում է համապատասխան փոփոխություններ:

62. Լիցենզիայի վերաձևակերպման հայտերը մերժվում են սույն կանոնակարգի 10-րդ կետով նախատեսված դեպքերում:

63. Լիցենզիայի վերաձևակերպման հայտերի վերաբերյալ որոշումները կայացվում են առանց Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացության: Սակայն հայտի մերժման հիմքի առկայության դեպքում կամ հայտատուի պահանջով իրականացվում է հայտի քննարկում՝ լսումների կարգով, որը սույն կանոնակարգի իմաստով՝ իրականացվում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովում:

64. Լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի կրկնօրինակ տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Գլուխ 13. Լրացումների կամ փոփոխությունների գրանցումը

65. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկ գրանցման ներկայացնել հետևյալ փոփոխությունները՝

ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության, նրա մասնաճյուղի, կամ ներկայացուցչության գործունեության վայրի փոփոխությունները,

բ) նոր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման մասին որոշումը,

գ) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները,

դ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության աշխատանքի կանոնակարգում իրականացվող լրացումները կամ փոփոխությունները:

Գլուխ 14. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության, նրա մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գործունեության վայրի փոփոխման, ինչպես նաև նոր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման և հաշվառման կարգը, հաշվառման համար պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը

66. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը իր, իր մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների գործունեության վայրի փոփոխման համար պարտավոր է այդ մասին որոշումը ներկայացնել Կենտրոնական բանկ համաձայնեցման:

Նոր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման համար դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պետք է ներկայացնի դրանք հաշվառման:

67. Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության, նրա մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների գործունեության վայրի փոփոխման, ինչպես նաև նոր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման համար կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա) կազմակերպության կառավարման իրավասու մարմնի համապատասխան որոշումը,

բ) մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու դիմում՝ համաձայն հավելված 6-ի, կամ գործունեության վայրի փոփոխման դիմում՝ համաձայն հավելված 7-ի,

գ) գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին (առկայության դեպքում),

դ) կատարված փոփոխությունները (առկայության դեպքում),

ե) մասնաճյուղի(ներկայացուցչության) տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը կամ համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագիր: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

զ) մասնաճյուղի տարածքի, տեխնիկական հագեցվածության, անվտանգության, ծրագրային պայմանների սույն կանոնակարգի 8-րդ և 9-րդ գլխով սահմանված չափանիշներին

համապատասխանելու մասին փաստաթղթերը՝ կազմված Կենտրոնական բանկի կողմից տեղերում տարածքի և տեխնիկական հագեցվածության, փաստաթղթերի առկայության ստուգման արդյունքների հիման վրա,

Սույն կետի գ) ենթակետերով սահմանված փաստաթղթի ներկայացման պահանջը չի տարածվում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ներկայացչության վրա:

68. Օտարերկրյա պետությունում մասնաճյուղ կամ ներկայացչություն ստեղծելիս դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը ստանում է Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 67-րդ կետի ա)-դ) ենթակետերում սահմանված փաստաթղթերը, իսկ համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց կամ համապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպության հետ գործակալության կամ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված մման այլ պայմանագիր կնքելուց) հետո հաշվառվում է Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման, պայմանագրի կնքման) փաստը վկայող փաստաթղթերը:

Անհրաժեշտության դեպքում, Կենտրոնական բանկի պահանջով դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը ներկայացնում է օտարերկրյա պետության դրամական միջոցների փոխանցումը կարգավորող իրավական ակտերը:

69. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 67-րդ կամ 68-րդ կետերով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում է սույն կանոնակարգի 66-րդ կետով ներկայացվող փոփոխությունները կամ մերժում է գրանցումը: Նախատեսվող փոփոխությունները ներկայացնում են Կենտրոնական բանկի նախագահի հաստատմանը:

70. Կենտրոնական բանկը մերժում է հայտը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում գրանցումը չմերժելու դեպքում փոփոխությունները համարվում են գրանցված:

71. Գիմումի բավարարման դեպքում Կենտրոնական բանկը հաշվառում է մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը և տալիս է հաշվառման վկայական համաձայն հավելված 12-ի՝ իրականացնելով լրացումներ և փոփոխություններ լիցենզիայի գրանցամատյաններում, իսկ մերժելու դեպքում մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

Գլուխ 15. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության աշխատանքի կանոնակարգում իրականացվող լրացումների կամ փոփոխությունների՝ Կենտրոնական բանկ ներկայացման տեխնիկական պայմաններն ու ձևը

72. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կառավարման մարմնի կողմից հաստատված աշխատանքի կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը ներկայացնել Կենտրոնական բանկ համաձայնեցման:

73. Աշխատանքի կանոնակարգում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացման համար դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա) կազմակերպության աշխատանքի կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրականացման համար դիմում՝ կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված կազմակերպության կնիքով,

բ) կազմակերպության կառավարման մարմնի որոշումը՝ աշխատանքի կանոնակարգում լրացումների և (կամ) փոփոխությունների իրականացման վերաբերյալ,

գ) աշխատանքի փոփոխված կանոնակարգի պատճենը և փոփոխման անհրաժեշտության հիմնավորումը:

74. Նախատեսվող փոփոխությունները ներկայացնում են Կենտրոնական բանկի հաստատմանը:

75. Կենտրոնական բանկը վերոնշյալ փաստաթղթերը ստանալու պահից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է համաձայնության տրամադրումը:

76. Կենտրոնական բանկի կողմից 15-օրյա ժամկետում գրանցումը չմերժելու դեպքում փոփոխությունները համարվում են գրանցված:

77. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կառավարման մարմնի կողմից հաստատված աշխատանքի կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու՝ Կենտրոնական բանկի կողմից տրված համաձայնության դեպքում կազմակերպության անհատական գործին կցվում են սույն կանոնակարգի 73-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

78. Կենտրոնական բանկը մերժում է լրացումների կամ փոփոխությունների իրականացումը, եթե առկա են սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված հիմքերը:

Կազմակերպության աշխատանքի կանոնակարգում լրացումների և փոփոխությունների իրականացման մերժման դեպքում Կենտրոնական բանկը մերժման հիմքերի մասին տեղեկացնում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

Գլուխ 16. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարների փոփոխման կարգը. փոփոխությունների իրականացման համար պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը

79. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարների կազմում փոփոխություններ կատարելու դեպքում կազմակերպությունը նոր նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուներին նախապես ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգի գլուխ 18-ի համաձայն որակավորման վկայական ստանալու համար:

80. Նշված պաշտոններում առանց որակավորման վկայականի որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավորման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 1 ամիս, ընդ որում՝ նշված մեկամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնին նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը մեկամսյա ժամկետի ընդհատում և վերսկսում չի նշանակում:

81. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

ա) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված կազմակերպության կնիքով,

բ) իրավասու մարմնի որոշումը փոփոխությունների վերաբերյալ,

գ) կազմակերպության ղեկավարների ընդհանուր ցուցակը՝ կատարված փոփոխություններով,

դ) կազմակերպության նոր ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված 2-ի,

ե) ղեկավարների թեկնածուների որակավորման վկայականի պատճենները:

82. Կենտրոնական բանկը, ստանալով վերոնշյալ փաստաթղթերը, տասնօրյա ժամկետում գրանցում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության նոր ղեկավարներին, որից հետո ղեկավարը իրավունք է ստանում աշխատել:

83. Կազմակերպության նոր ղեկավարների գրանցումը մերժվում է, եթե.

ա) ղեկավարների թեկնածուները չեն բավարարում սույն կանոնակարգի 85-րդ կետով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին,

բ) սույն կանոնակարգի 81-րդ կետով սահմանված փաստաթղթերը կեղծ են կամ թերի են ներկայացված:

Գլուխ 17. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարներին ներկայացվող որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները

84. Անձը կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավար աշխատել սույն կանոնակարգի գլուխ 16-ով կամ գլուխ 18-ով սահմանված ընթացակարգերի համաձայն Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

85. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարները բավարարում են որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին, եթե՝

- ա) առկա է սույն կանոնակարգի 95-րդ կետով սահմանված որակավորման վկայականը,
- բ) բացակայում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի 2-րդ մասով սահմանված ղեկավարների թեկնածության մերժման հիմքերը:

Գլուխ 18. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարների թեկնածուների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը

86. Լիցենզավորված անձի լիցենզիայի ներդիրում նշված ղեկավարների՝ գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, գլխավոր հաշվապահի (այսուհետև՝ թեկնածուներ) թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը՝ դռնբաց եղանակով:

87. Թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումն անցկացվում է երկու ձևով՝

- ա) գրավոր (տեստային) քննություն, որն իրականացվում է համակարգչով՝ Կենտրոնական բանկի մեկ համակարգչային մասնագետի մասնակցությամբ, կամ

- բ) բանավոր հարցազրույցի ձևով, որն անցկացվում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստում:

88. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության գրավոր քննություն անցնում են բարձրագույն տնտեսագիտական, տեխնիկական կամ իրավաբանական կրթություն ունեցող անձինք:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության բանավոր հարցազրույց անցնում են բարձրագույն տնտեսագիտական, տեխնիկական կամ իրավաբանական կրթություն ունեցող այն անձինք, ովքեր լիցենզավորման համար դիմելուն նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի աշխատել են վճարահաշվարկային ոլորտում ղեկավար պաշտոններում:

89. Կենտրոնական բանկում որակավորման և մասնագիտական համապատասխանության գրավոր և բանավոր քննությանը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների մասնակցության համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ղեկավարի թեկնածուի դիմումը՝ համաձայն հավելված 8-ի,
- բ) բարձրագույն կրթության դիպլոմի (վկայականի) պատճենը, գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի (առկայության դեպքում) պատճենը,
- գ) կենսագրական տվյալներ՝ համաձայն հավելված 9-ի,

դ) որակավորման ստուգման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

90. Թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության գրավոր քննությունն անցկացվում է տեստային եղանակով՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից լիազորված անձի (անձանց) ներկայությամբ:

Գրավոր քննության տեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է Կենտրոնական բանկի կողմից և որը կազմվում է նախապես հրապարակված թեմաների ցանկի հիման վրա: Տեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ և ենթակա չեն հրապարակման:

Տեստում պարունակվող հարցերի թիվը 30 է: Տեստին պատասխանելու համար տրվում է 45 րոպե:

Տեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից մեկն է ճիշտ:

Տեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

Գրավոր (տեստային) քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել իրավական ակտերից և այլ նյութերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, հեռախոսակապից, երկխոսության մեջ մտնել մյուս թեկնածուների հետ:

Գրավոր քննությանը հատկացված ժամանակի ավարտից հետո թեկնածուն պարտավոր է տեստը պատասխաններով հանձնել Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի պատասխանատու անձին:

Նյութերից օգտվելու և տեստը պատասխանատու անձին ժամանակին չհանձնելու դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և նրա վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Թեկնածուներին թույլատրվում է մասնակցել քննությանը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում:

91. Տեստերի հարցերի պատասխանների արդյունքները քննություն անցկացնող Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն ամփոփում են հանձնաժողովի նիստից առնվազն կես ժամ առաջ, և ներկայացնում Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստին:

92. Տեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ. եթե թեկնածուն հավաքել է՝

ա) մինչև 21 միավոր, ապա Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովն արձանագրում է, որ թեկնածուն իր որակավորմամբ և մասնագիտական առումով չի համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին,

բ) 21 և ավելի միավոր, ապա Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովն արձանագրում է, որ թեկնածուն իր որակավորմամբ և մասնագիտական առումով համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին:

93. Բանավոր հարցազրույցի արդյունքները գնահատվում են հինգ բալանոց համակարգով. երեք և ավելի բալ հավաքելու դեպքում թեկնածուն իր որակավորմամբ և մասնագիտական առումով համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին:

94. Թեկնածուի վերաբերյալ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի նախագահին՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստի օրվանից ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: Բացասական եզրակացության դեպքում Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը պարտավոր է մանրամասն ներկայացնել նաև այն փաստերը, որոնց ուսումնասիրության արդյունքում հանգել է տվյալ եզրակացությանը:

95. Որակավորման քննության կամ հարցազրույցի դրական արդյունքների դեպքում ղեկավարի թեկնածուին տրվում է որակավորման վկայական՝ համաձայն հավելված 10-ի: Եթե թեկնածուն որակավորմամբ և մասնագիտական առումով չի համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին, ապա նա կարող է կրկին դիմել՝ որակավորման և մասնագիտական քննություն անցնելու համար:

96. Տեստավորման արդյունքների մասին որակավորվող անձին պատշաճ ձևով հայտնվում է, կամ դրանք նրան ուղարկվում են ոչ ուշ, քան ստուգումների ավարտի օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում:

97. Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին կամ դատարան: Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին բողոքարկումը Կենտրոնական բանկում իրականացվում է լսումների կարգով՝ բողոքը ստանալու պահից երեսուրյա ժամկետում: Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին՝ որակավորման բացասական եզրակացությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

98. Ղեկավարները կամ վկայական ունեցող անձինք որակավորման վկայականը կորցնելու դեպքում կարող են տասնօրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին: Կորցրած վկայականը Կենտրոնական բանկի կողմից համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով:

99. Տրված որակավորման վկայականների հաշվառման մատյանում գրառվում են վկայական ստացած անձանց անունը, ազգանունը, հասցեն, Կենտրոնական բանկի նախագահի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը, Կենտրոնական բանկի լիցենզավորման և

վերահսկողության հանձնաժողովի համապատասխան արձանագրության համարը և ամսաթիվը, որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականի համարը և տրվելու ամսաթիվը:

100. Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննություններն անցկացնում է փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու պահից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

101. Որակավորման վկայականները տրվում են դրանց տրամադրման պահից հաշված հինգ տարի ժամկետով:

Կենտրոնական բանկը, հաշվի առնելով դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գործադիր տնօրենի, նրա տեղակալի, գլխավոր հաշվապահի որակավորման վկայականի գործողության ընթացքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի խախտումների, ինչպես նաև նշված ղեկավարների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների բացակայությունը, կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականի գործողության ժամկետը երկարաձգել հինգ տարով՝ առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման:

Գլուխ 19. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարների գրանցումը

102. Սույն կանոնակարգի 9-րդ կետի համաձայն կազմակերպությանը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա տրամադրելիս կազմակերպության ղեկավարների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի հիման վրա Կենտրոնական բանկը միաժամանակ գրանցում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարին, որն այդ պահից իրավունք է ստանում աշխատել: Ընդ որում, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարի փոփոխության դեպքում նոր ղեկավարը նույնպես իրավունք է ստանում աշխատել՝ սույն կանոնակարգի գլուխ 16-ի համաձայն Կենտրոնական բանկում գրանցվելու պահից: Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարի գրանցումը իրականացվում է ղեկավարների լիցենզիայի ներդիրում գրառում կատարելով:

103. Որակավորման վկայականի գործողության ժամկետը լրանալուց անմիջապես հետո Կենտրոնական բանկը գրանցումից հանում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարին, եթե վերջինս չի ստացել որակավորման նոր վկայական:

Գլուխ 20. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության կարգավորումը

104. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները կարող են իրականացնել հայկական դրամով և (կամ) արտարժույթով ֆիզիկական և իրավաբանական անձանցից և (կամ) անձանց ուղղված վճարումների ընդունումը և կատարումը՝ առանց բանկային հաշիվների, այն է՝

ա) հաճախորդներից դրամական միջոցներ (կանխիկ կամ անկանխիկ) և շահառուների օգտին վճարում կատարելու կարգադրության ընդունում և կատարման ապահովում, այդ թվում՝ հանձնարարության, կոմիսիայի, կամ գործակալության պայմանագրի հիման վրա պայմանագրի կողմ հանդիսացող անձից դրամական միջոցներ և որոշակի ցանկով սահմանված շահառուների օգտին վճարում կատարելու կարգադրության ընդունում և կատարում,

բ) շահառու հանդիսացող հաճախորդներին ուղղված վճարումների (կանխիկ կամ անկանխիկ) ընդունում և կատարում, այդ թվում՝ հանձնարարության, կոմիսիայի, կամ գործակալության պայմանագրի հիման վրա պայմանագրի կողմ հանդիսացող շահառուի օգտին վճարումների հավաքագրում (օրինակ՝ կոմունալ վճարումների, բյուջեին ուղղված վճարումների ընդունում):

Սույն կետում նշված ծառայությունների կատարումը կարող է իրականացվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության մասնաճյուղային ցանցի, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու իրավասություն ունեցող այլ կազմակերպության, կամ դրամական (փողային) փոխանցումների համակարգերի միջոցով:

104¹. Արտարժույթով միջոցների փոխանցումների իրականացման դեպքում վճարման ենթակա գումարների ընդունումը վճարողներից և վճարման ենթակա գումարների տրամադրումը շահառուներին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից իրականացվում են սույն կետում նշված կանոնների համաձայն.

ա) Միջոցների փոխանցման վճարող հանդիսացող հաճախորդից արտարժույթով փոխանցում կատարելու կարգադրությունը ընդունելիս, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը փոխանցվող գումարը հաճախորդից ընդունում է (հաճախորդի կողմից վճարվում է) կարգադրությունում նշված արտարժույթով, իսկ հաճախորդի ցանկության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ տվյալ դրամական (փողային) փոխանցումների համակարգի կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կանոններով, փոխանցվող գումարը կարող է ընդունվել (վճարվել) ՀՀ դրամով՝ կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքով:

բ) Միջոցների փոխանցման շահառու հանդիսացող հաճախորդին արտարժույթով վճարում կատարելու կարգադրությունը ստանալիս, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը վճարվող գումարը հաճախորդին տրամադրում է կարգադրությունում նշված արտարժույթով, իսկ շահառուի ցանկության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ տվյալ դրամական (փողային) փոխանցումների համակարգի կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կանոններով, վճարվող գումարը կարող է տրամադրվել ՀՀ դրամով՝ կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքով:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը իրավասու չէ պարտադրել իր հաճախորդին կատարել կամ ընդունել վճարումը ՀՀ դրամով, եթե միջոցների փոխանցումը կատարվում է արտարժույթով: Դրամական (փողային) փոխանցման հետ կապված ծառայության միջնորդավճարները պետք է կատարվեն միայն ՀՀ դրամով:

Սույն կետում նշված գործառնություններից տարբերվող այլ փոխարկման գործառնությունները դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է իրականացնել

միայն համապատասխան լիցենզիայի (արտարժույթի դիլերային առուվաճառքի կամ արտարժույթի առուվաճառքի) առկայության դեպքում:

104². ՀՀ դրամով փոխանցումների իրականացման դեպքում վճարման ենթակա գումարների ընդունումը վճարողներից և վճարման ենթակա գումարների տրամադրումը շահառուներին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից իրականացվում են միայն ՀՀ դրամով:

105. Ըստ յուրաքանչյուր մատուցվող վճարահաշվարկային ծառայության տեսակի պետք է նկարագրված լինի տվյալ ծառայության իրականացման կարգը, պայմանները, ժամկետները, աշխարհագրությունը, վերջնահաշվարկների իրականացման կանոնները:

106. Վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համար հիմք են հանդիսանում համապատասխան փաստաթղթերով (վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոնակարգով, դրամական (փողային) փոխանցումների համակարգերի կանոններով, պայմանագրերով և այլն) սահմանված գրավոր կարգադրությունները (թղթային, էլեկտրոնային): Մույն կանոնակարգի 104¹ կետի «ա» կամ «բ» ենթակետերում սահմանված փոխարկման գործառնությունների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվող անդորրագրում, ինչպես նաև հաճախորդի կողմից ներկայացված դրամական փոխանցման կատարման (դրամական փոխանցման ստացման) կարգադրությունում փոխանցման արժույթով գումարը նշելուց բացի, պետք է նշված լինեն փոխարժեքը և հաճախորդից ընդունված (հաճախորդին տրամադրված) գումարը ՀՀ դրամով:

107. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պարտավոր է հաճախորդին տրամադրել յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարման վերաբերյալ անդորրագիր:

Գլուխ 21. Լիցենզիայի գործողության կասեցման ընթացակարգը

108. Լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում: Այն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում չքննարկվելու դեպքում դիմումը համարվում է բավարարված, իսկ լիցենզիայի գործողությունը կասեցված՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից նշված ժամկետով:

Լիցենզիայի գործողության կասեցման մասին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության դիմումի հիման վրա դրամական (փողային) փոխանցումների

իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից:

109. Որպես օրենքի խախտման հետևանք լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանը հաջորդող հինգերորդ օրը, եթե այդ ժամկետում Կենտրոնական բանկն այլ որոշում չի կայացնում կամ այլ ավելի կարճ ժամկետ չի սահմանում և դրա մասին պատշաճ ձևով տեղեկացնում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

110. Լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձը ժամանակավորապես զրկվում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու իր բոլոր իրավունքից:

111. Գրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը նշված որոշումը հրապարակվում է մամուլում:

Գլուխ 22. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու ընթացակարգը

112. Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումին կից լիցենզավորված կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հայտարարագիր՝ պարտատերեր չունենալու վերաբերյալ: Պարտատերերի առկայության կամ Կենտրոնական բանկի ստուգման արդյունքում դրանց հայտնաբերման դեպքում կազմակերպության կողմից պարտատերերի պահանջները բավարարելու անհնարինության պարագայում Կենտրոնական բանկի կողմից նախաձեռնվում է պարտատերերի պահանջների բավարարման՝ սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված ընթացակարգի համաձայն:

Կենտրոնական բանկի կողմից կարող է սահմանվել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դիմումում նշվածից ավելի ուշ ժամկետ, եթե լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հետևանքով ուղղակի վնաս կհասցվի պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի համբավին:

113. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ա), բ), գ) և ե) ենթակետերով նախատեսված հիմքերով լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու գործընթաց նախաձեռնելիս Կենտրոնական բանկը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտատերերի ի հայտ բերման ուղղությամբ: Վերջիններիս առկայության դեպքում պարտավորությունների մարումն իրականացվում է սույն կանոնակարգի գլուխ 7-ով սահմանված ընթացակարգով:

Հավելված 1

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

**ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎ**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
-----ին

Իրավաբանական անձի անվանումը _____

Կազմակերպական-իրավական ձևը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Խնդրում եմք տրամադրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա:
Կից ներկայացնում եմք՝

Հիմնադիրներ՝ _____

(անուն, ազգանունը)

(ստորագրությունը)

Հավելված 2

«Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԳՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

I. Մասնակիցներ

Ընդհանուր տեղեկատվություն

ա) ֆիզիկական անձի համար

- Անունը, հայրանունը, ազգանունը _____
- Քաղաքացիությունը _____

բ) իրավաբանական անձի համար

- Անվանումը _____
- Գրանցման երկիրը _____

II. Ղեկավարներ

1. Չբաղեցրած կամ առաջադրվող պաշտոնը, դիրքը

2. Ընդհանուր տեղեկատվություն

- Անունը, հայրանունը, ազգանունը _____
- Քաղաքացիությունը _____

3. Կրթություն, որակավորում

| Ուսումնական հաստատության (այդ թվում՝ դպրոցի) անվանումը | Գ-տնվելու վայրը | Հաճախումների ժամանակաշրջանը (---թ-ից մինչև ----թ.) | Գ-իտական աստիճանները |
|--|-----------------|--|----------------------|
| | | | |
| | | | |
| | | | |

4. Աշխատանքային գործունեությունը

| N | Կազմակերպության անվանումը | Գ-տնվելու վայրը | Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները | Պաշտոնը |
|----|---------------------------|-----------------|--|---------|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

5. Այլ տեղեկություններ.

Հայտարարություն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 22-ի 2-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկանքում պարունակվող տեղեկատվությունը ստույգ է և լիակատար: Ես համաձայն եմ Կենտրոնական բանկին տեղեկացնել անձնական, կենսագրական և ֆինանսական տեղեկատվության մեջ տեղի ունեցող կամ ակնկալվող որևէ էական փոփոխության փաստի մասին:

(ստորագրությունը)

(ամսաթիվը)

Հավելված 3.1

«Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Լիցենզիան * տրվել է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
----- 200 -- ք.
թիվ ----- որոշմամբ

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ....

Սույն լիցենզիան տրվում է -----
(իրավաբանական անձի անվանումը)

դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու համար:

Գտնվելու վայրը -----

Պետական գրանցման համարը -----

Լիցենզիան տրված է անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ -----

Կ.Տ.

* Լիցենզիայում փոփոխություններ կատարելու դեպքում այդ մասին նշվում է լիցենզիայի վերին աջ անկյունում:

Հավելված 3.2

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

«Հաստատում եմ»
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____ 200 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ.... ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

Ղեկավարի (ղեկավարների) մասնագիտական որակավորման համապատասխանության մասին

Անուն, ազգանուն

անձնագրի սերիան և համարը

- 1. _____
- 2. _____
- 3. _____

Սույն ներդիրը

_____ (լիցենզավորված անձի անվանումը)

դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու թիվ _____ (տրված՝ _____
_____ 200 թ.) լիցենզիայի անբաժանելի մասն է:

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ՍԱՄԻՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում է _____
(կազմակերպության անվանումը)

կազմակերպությանը՝ գրանցված _____
(կազմակերպության գրանցման լրիվ հասցեն)

հասցեով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման համար և վկայում է այն մասին, որ վերոնշյալ կազմակերպությունը, դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստանալու նպատակով ս.թ. _____ մեր՝

_____, բանկում
(բանկի լրիվ անվանումը)

դեպոնացրել է _____ դրամական միջոցներ:
(դեպոնացված գումարի չափը ՀՀ դրամով)

Վերոնշյալ կազմակերպության հետ կնքվել է բանկային հաշվի պայմանագիր, որտեղ սահմանված են հաշվի վարման և սպասարկման հետ կապված բոլոր պայմանները:

Հարգանքներով,

(բանկի անվանումը)

(բանկի բարձրագույն մարմնի պաշտոնը և անուն/ազգանունը)

Կ.Տ.

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում է _____

(կազմակերպության անվանումը)

կազմակերպությանը՝ գրանցված _____

(կազմակերպության գրանցման լրիվ հասցեն)

հասցեով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման համար և վկայում է այն մասին, որ վերոնշյալ կազմակերպությունը, դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստանալու նպատակով ս.թ. _____ մեր՝

_____ ։ բանկում

(բանկի լրիվ անվանումը)

դեպոնացրել է _____ անվանական արժեքով

(անվանական արժեքի մեծությունը բառերով)

_____ :

(դեպոնացված արժեթղթի տեսակը)

Վերոնշյալ կազմակերպության հետ կնքվել է արժեթղթերի դեպո հաշվի վարման և սպասարկման պայմանագիր:

Հարգանքներով,

(բանկի անվանումը)

(բանկի բարձրագույն մարմնի պաշտոնը և անուն/ազգանունը)

Կ.Տ.

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԿԱՄՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԲԱՅԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՉԵՎ

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Խնդրում եմ թույլատրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու համար
_____ քաջել _____

(մասնաճյուղ կամ ներկայացչություն)

(գործունեության

վայրը)

հասցեում:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
- _____
- _____
- _____
- _____

Ղեկավար՝ _____ / _____ /

_____ 200 թ.

Կ.Տ.

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա թիվ _____
տրված՝ _____ 200 թ.

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, դեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Խնդրում եմ թույլատրել փոփոխել _____
(զլխամասի, մասնաճյուղի կամ ներկայացչության հին
գործունեության վայրը)

իրականացվող գործունեության վայրը՝ տեղափոխելով այն _____

(զլխամասի, մասնաճյուղի կամ ներկայացչության նոր գործունեության վայրը)

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
- _____
- _____
- _____
- _____

Ղեկավար՝ _____ / /

200 թ.

Կ.Տ.

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա թիվ _____
տրված՝ _____ 200 թ.

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ՀԱՅՏԻ ՁԵՎ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՍԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Խնդրում եմ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու նպատակով թույլատրել մասնակցել մասնագիտական որակավորման քննությանը:

Կից ներկայացնում եմ՝

Դիմող՝ _____
(անուն, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Հավելված 9

«Գրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Ընդհանուր տեղեկատվություն.

Անունը, հայրանունը, ազգանունը _____

Սեռը _____

Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____

Ծննդավայրը _____

Քաղաքացիությունը _____

Ընտանեկան դրությունը տվյալ պահին _____

Անձնագրի սերիան և համարը _____

(օտարերկրյա անձանց համար, օրինակ՝ սոցիալական պաշտպանվածության համարը) Հասցեն
(մշտական և տվյալ պահին բնակության)

Հեռախոսահամարներ _____

2. Նշեք այժմ և նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ինչպես նաև դրանք կրելու ժամանակաշրջանը.

| | |
|---------------------|-------------------------|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| _____ | _____ |
| (անունը, ազգանունը) | (կրելու ժամանակաշրջանը) |

3. Կրթություն, որակավորում.

| Ուսումնական հաստատության (այդ թվում՝ դպրոցի) անվանումը | Գ-տնվելու վայրը | Հաճախումների ժամանակաշրջանը (---թ-ից մինչև ----թ.) | Գիտական աստիճանները |
|--|-----------------|--|---------------------|
| | | | |
| | | | |
| | | | |

4. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում.

| | |
|---------------|------------------------|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| _____ | _____ |
| (օտար լեզուն) | (տիրապետման մակարդակը) |

5. Աշխատանքային գործունեությունը

| N | Կազմակերպության անվանումը | Գտնվելու վայրը | Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները | Պաշտոնը |
|----|---------------------------|----------------|--|---------|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

6. Այլ տեղեկություններ.

(ցանկացած այլ տեղեկատվություն, որը մասնակիցն անհրաժեշտ կգտնի տեղեկացնելու)

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկանքում պարունակվող տեղեկատվությունը ստույգ է և լիակատար: Ես համաձայն եմ Կենտրոնական բանկին տեղեկացնել անձնական, կենսագրական և ֆինանսական տեղեկատվության մեջ տեղի ունեցող կամ ակնկալվող որևէ էական փոփոխության փաստի մասին:

(ստորագրությունը)

(ամսաթիվը)

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի _____
_____ 200 թ. թիվ _____ որոշման (Կենտրոնական բանկի լիցենզավորման և
վերահսկողության հանձնաժողովի _____ 200 թ. թիվ _____
արձանագրություն)`

_____-ին _____
(անուն, ազգանունը) (անձնագրային տվյալները)

տրվել է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարի
որակավորման դրական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ`

Կ.Տ.

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյան

| Գրանցման № | Լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը | Լիցենզիայի համարը | Խորհրդի որոշման ամսաթիվը և համարը | Գտնվելու վայրը | Գործունեության իրականացման վայրը | Տեղեկություններ լիցենզիայի վերաձևակերպման մասին | Տեղեկություններ լիցենզիայի գործողության կասեցման մասին | Տեղեկություններ լիցենզիայի գործողություն դադարեցման (ուժը կորցրած ճանաչման) մասին | Այլ Տեղեկություններ | | Լիցենզիան տալու ամսաթիվը | Լիցենզիան ստացողի ստորագրությունը |
|------------|---|-------------------|-----------------------------------|----------------|----------------------------------|---|--|---|---------------------|--|--------------------------|-----------------------------------|
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի

ՀՀ զինանշան

Հաշվառված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

--- թվականի թիվ --- որոշմամբ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ --

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության

մասնաճյուղին (ներկայացչությանը):

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ)
ՓՈՒՆԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՍԱՄՆԱՃՅՈՒԻ
(ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅԱՆ)
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Գործունեության վայր _____ -
(մասնաճյուղի կամ ներկայացչության գործունեության վայր)

Հաշվառման համարը _____

Հաշվառման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

.....

Ք. ԵՐԵՎԱՆ

--- ----- 200 ... թ.

Կ.Տ.